ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2026 թ. N 273-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 21-ի N 58-Ա որոշումը, Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման մրցույթի անցկացման կանոնակարգի 5-րդ կետով՝ ***որոշում եմ***՝

1. Հայտարարել մրցույթ Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքի քաղաքային այգու տարածքի ընդհանուր օգտագործման հողամասերից չափագրմամբ 50 քմ և 55 քմ մակերեսներով առանձնացված հողամասերը կառուցապատման իրավունքով տրամադրման համար. մրցույթի օր նշանակել 2026 թվականի սեպտեմբերի 25-ը:

2.Հաստատել մրցույթի հրապարակային ծանուցումը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 18
Ջերմուկ

Հավելված

Ջերմուկ համայնքի ղեկավարի 2026 թվականի

օգոստոսի 18-ի N 273-Ա որոշման

ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման բաց մրցույթ

հ/հ	Հողամասի գտնվելու վայրը (հասցեն)	Հողամասի մակերեսը (հա)	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը	Կառուցապատման իրավունքի ժամկետը (տարի)	Հողամասի վճարի մեկնարկային չափը (դրամ)	Նախավճարի չափը, (դրամ)	Հողամասի օգտագործման նպատակը, հաղորդակցությունների առկայությունը
Լոտ 1	ք. Ջերմուկ, քաղաքային այգու տարածք	0,0055	բնակավայրերի	ընդհանուր օգտագործման	3	55000 ամսական	2750	հանգստի և ժամանցի համար նախատեսված հասարակական շինության կառուցում առկա է
Լոտ 2	ք. Ջերմուկ, քաղաքային այգու տարածք	0,0050	բնակավայրերի	ընդհանուր օգտագործման	3	50000 ամսական	2500	հանգստի և ժամանցի համար նախատեսված հասարակական շինության կառուցում առկա է

Մրցույթը կկայանա 2026 թվականի սեպտեմբերի 25-ին, ժամը 11:00-ին Ջերմուկի համայնքապետարանի նիստերի սրահում (ք. Ջերմուկ, Մյասնիկյան փողոց N 8, 2-րդ հարկ):

Մրցույթին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հայտ, մասնակցության համար սահմանված չափով վճարի (20000 դրամ, որն անկախ մրցույթի արդյունքներից՝ ետ չի վերադարձվում) անդորրագիրը, անձնագիր (նույնականացման քարտ), իրավաբանական անձանց դեպքում՝ նաև հիմնադիր փաստաթղթեր: Ներկայացվող հայտին կցվում է մրցույթի պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկ (օրինակելի ձևը տրամադրվում է տեղում) և գործարար ծրագիր՝ առկայության դեպքում:

Նախավճարի չափը՝ մեկնարկային վճարի 5%-ը, որը մրցույթի մասնակիցները մուծում են մրցույթի անցկացման օրը: Մրցույթում գնային սակարկության մեկ քայլի չափը սահմանվում է տվյալ մրցույթի առարկա հանդիսացող գույքի տարեկան վարձավճարի 5 տոկոսի չափով:

Նշված հողամասերում չկան ճանապարհներ, ջրատար, գազատար, կոյուղու խողովակաշարեր և էլեկտրահաղորդման գծեր, սերվիտուտներ:

Մրցույթում հաղթող կճանաչվի հանձնաժողովի եզրակացությամբ՝ լավագույն պայմաններ առաջարկած և կշռային գործակիցներով բարձր միավորներ հավաքած մասնակիցը: Մրցույթում առաջարկված հավասար պայմանների դեպքում նախապատվությունը կտրվի Ձերմուկ համայնքի բնակչին կամ համայնքում գրանցված իրավաբանական անձին:

Մրցույթը կանցկացվի Ձերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման մրցույթի անցկացման կանոնակարգի համաձայն: Մասնակցության հայտ ներկայացնելու, մրցույթի կանոնակարգին, ինչպես նաև լոտերով ներկայացված հողամասերի վերաբերյալ տվյալներին ծանոթանալու համար դիմել Ձերմուկի համայնքապետարան (ք. Ձերմուկ, Մյասնիկյան փողոց N 8, հեռախոս՝ 060747077):

Մրցույթին մասնակցելու հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ՝ մինչև 2026 թվականի սեպտեմբերի 22-ը, ժամը՝ 18:00-ը: Մրցույթի հայտատուները մինչև մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետի ավարտը կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտը:

Մրցույթում հաղթած անձը և հանձնաժողովը՝ ի դեմս նախագահի, մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը: Մրցույթում հաղթած անձն արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում կորցնում է մուծած նախավճարը և զրկվում է մրցույթը չկայանալու պարագայում հողամասն առանց մրցույթի վարձակալելու իրավունքից: Վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագրի և հողամասի հատակագծի նախագծերին կարելի է ծանոթանալ տեղում, այլ պայմանների ծանոթանալու համար կարելի է զանգահարել 028721217 կամ 060747077 հեռախոսահամարներով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 օգոստոսի 2026 թ. N 274-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 28-ՐԴ ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Վարդան Իշխանի Ավետյանի դիմումը (մտից՝ 2021 թվականի հունվարի 26-ի N 157)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 28-րդ շենքի հարևանությամբ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 60,4 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 60,4 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 55,2 քմ) ավտոտնակը (այսուհետ՝ շինություն) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական. ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2026QZCR84:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս N 28/1:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Վարդան Իշխանի Ավետյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 19
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2026 թ. N 275-Ա

ԱՐԱԳԱԾ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲԱՑՕԹՅԱ ՎԱՃԱՌՔ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Առևտրի և ծառայությունների մասին» օերնքի 5[1]-րդ հոդվածի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի և 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշումը և հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Արագած Հմայակի Խաչատրյանի դիմում-հայտը (մտից N 1427, 20.08.2026 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Թույլատրել Ջերմուկ համայնքի բնակիչ Արագած Հմայակի Խաչատրյանին Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցին հարող տարածքում՝ բնակելի գոտու սկզբնամասում կազմակերպելու բացօթյա վաճառք (Թույլտվություն N 57):

2. Արագած Հմայակի Խաչատրյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031377 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ առևտրի իրականացման յուրաքանչյուր օրվա համար 263 (երկու հարյուր վաթսուներեք դրամ) ՀՀ դրամ՝ 1 քառակուսի մետր տարածքի հաշով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման օրվանից, և տեղական տուրքի վճարման առկայությամբ՝ ուժի մեջ է համարվում համապատասխան օրերի քանակով:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 20
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2026 թ. N 276-Ա

«JERMUK CITY FEST 2026» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԵՎ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասին, 31-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 1699-Ն որոշմամբ հաստատված ճանապարհային երթևեկության կազմակերպման կանոններին համապատասխան, 2026 թվականի օգոստոսի 22-ին Ջերմուկ քաղաքում «Jermuk City Fest 2026» միջոցառման անցկացմամբ պայմանավորված՝ ***որոշում եմ՝***

1. 2026 թվականի օգոստոսի 22-ին՝ ժամը 13:30-ից մինչև 23:30-ը «Jermuk City Fest 2026» միջոցառման անցկացման կապակցությամբ՝

ա/ Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցում սահմանել տրանսպորտային միջոցների ժամանակավոր միակողմանի երթևեկություն՝ Շահումյան և Բարեկամություն փողոցների հատման խաչմերուկից մինչև Շահումյան և Վարդանյան փողոցների հատման խաչմերուկը, ընդ որում՝ տրանսպորտային միջոցների մուտքը և կայանումը Մեծ Հոկտեմբերի 50 -ամյակի հուշարձանին հարակից հրապարակում բացառել,

բ/ դադարեցնել տրանսպորտային միջոցների երթևեկությունը Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի՝ դեպի Ջերմուկի ըմպելասրահ տանող հատվածից:

2. Սույն որոշման 1-ին կետով սահմանված երթևեկության ժամանակավոր փոփոխությունն իրականացնել ճանապարհային երթևեկության կազմակերպման ժամանակավոր տեխնիկական միջոցների կիրառմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 1699-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան:

3. Սույն որոշման 1-ին կետով սահմանված՝ Շահումյան փողոցի միակողմանի երթևեկության ռեժիմի և Մյասնիկյան փողոցի սկզբնահատվածի երթևեկության դադարեցման մասին ճանապարհային երթևեկության մասնակիցներին տեղեկացնելու նպատակով համապատասխան հատվածներում տեղադրել անհրաժեշտ

ժամանակավոր ճանապարհային նշաններ, արգելապատնեշներ և ուղղորդող այլ տեխնիկական միջոցներ:

4. Սույն որոշմամբ սահմանված երթևեկության ժամանակավոր փոփոխությունների վերաբերյալ իրազեկել համայնքային ոստիկանությանը:

5. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել Ջերմուկ համայնքի ղեկավարի տեղակալ Արտուշ Սիմոնյանին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 20
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2026 թ. N 277-Ա

«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշման, հիմք ընդունելով «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փորձաքննության եզրակացությունը, հաշվի առնելով «Լիդիան Արմենիա» ՓԲԸ տնօրեն Հ. Ալոյանի՝ էլեկտրոնային հարթակով ս/թ օգոստոսի 11-ին ներկայացրած ՇԹԴ/699/20543-26 դիմումը՝ ***որոշում եմ՝***

1. «Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի Ծաղկոտն թաղամասի N 15 հողամասում Ամուլսարի ոսկու ծրագրով նախատեսված օժանդակ շինությունների (գրասենյակ, ճաշարան, պահեստ, արհեստագործական շինություն) կառուցման շինարարության թույլտվություն:

2. «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության տրամադրման համար:

3. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 20
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2026 թ. N 278-Ա

ՅՈՒՐԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ՀՈՂԱՄԱՍԸ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Յուրա Հովհաննեսի Ավանեսյանի դիմումը (մտից՝ N 1420, 19.08.2026 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի 5-րդ փակուղու վրա գտնվող հողամասին նախկինում տրված հասցեի՝ ք. Ջերմուկ, Ձախափնյակ թ. 5-րդ փակուղի թիվ 11, ճշտման նպատակով այն վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ազատամարտիկների փողոց, 5-րդ փակուղի N 8:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 21
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2026 թ. N 279-Ա

ԱՐԵՎՀԱՏ ՊԱՊՈՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Արևհատ Պապոյի Գրիգորյանի դիմումը (մտից՝ N 1418, 19.08.2025 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի N 17-րդ շենքում գտնվող բնակարանին նախկինում տրված հասցեի՝ ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս 17 շենք 34 բնակարան, ճշտման նպատակով այն վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ազատամարտիկների փողոց 17–րդ շենք N 34:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 21
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 օգոստոսի 2026 թ. N 280-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ Արտակ Կառլենի Բագրատյանի դիմումը (մտից՝ 2026 թվականի օգոստոսի 20-ի N 1431)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի 1-ին փողոցի վրա գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 86,1 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 86,1 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 68 քմ) օժանդակ շինությունը (այսուհետ՝ շինություն) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական. ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 20264U5ZSE:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գ. Կեչուտ, 1-ին փողոց N 1/3:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Կեչուտ գյուղի բնակիչ Արտակ Կառլենի Բագրատյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2026 թ. N 281-Ա

ԱՐՈՒՀԻ ՀԱՅԿԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Արուհի Հայկի Ալեքսանյանի դիմումը (մտից՝ N 1441, 24.08.2026 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի N 17-րդ շենքում գտնվող բնակարանին նախկինում տրված հասցեի՝ ք. Ջերմուկ, Ձախափնյակ 17 շենքի թիվ 26 բնակարան, ճշտման նպատակով այն վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ազատամարտիկների փողոց 17–րդ շենք N 26:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2026 թ. N 282-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0036 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիման վրա՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասում գտնվող 0,0036 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20258ASFZY:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս N 7/10:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 26
Ջերմուկ